բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես 100,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, սակայն՝ գրավոր միջնորդության տեսքով դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացվել, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Փրայմ մեդիքալ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 11.12.2025թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումը՝ գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «Մեդպրո» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2025թ. դեկտեմբերի 11-ի թիվ 6 արձանագրությամբ կայացված «Մեդպրո» ՍՊ ընկերությանը 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE5D-D28D-4261-B8D3 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am